

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/8

15 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց «Մուլտի Հոմ» ՍՊԸ 27.06.2014 թ-ի և 09.07.2014 թ-ի գրություններով բերված գանգատը 2013 թ-ի ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

«Մուլտի Հոմ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Մուլտի Հոմ» ՍՊԸ-ն 2013 թ-ին շփոթմամբ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության փոխարեն ներկայացրել է որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարություն: Հարկային մարմինը ընկերությանը տրամադրել է ԱԱՀ վճարողի հաշվառման համար և հարկային հաշիվներ դուրս գրելու թույլտվություն: Այդ հիմքով 2013 թ-ի ընթացքում ընկերությունն իրեն համարել է ԱԱՀ վճարող և կատարել է դրանից բխող գործողություններ՝ դուրս է գրել հարկային հաշիվներ, ներկայացրել ԱԱՀ-ի հաշվարկներ, շահութահարկի հաշվարկ, տեղեկություններ ստացված և դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ: Այդ ժամանակահատվածում ընկերությունը հանդիսացել է օրինավոր հարկ վճարող ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները:

09.06.2014 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ-ից ստացվել է ծանուցում, որտեղ նշված է, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն ընկերությունը համարվում է շրջանառության հարկ վճարող, իսկ 58.35 մլն դրամը գերազանցելուց հետո ԱԱՀ վճարող: Առաջարկվում է ներկայացնել համապատասխան հաշվարկներ և ճշգրտված հաշվարկներ, որի հետևանքով կառաջանան լրացուցիչ հարկային պարտավորություններ, որոնք ընկերությանը կկանգնեցնեն լուրջ ֆինանսական խնդիրների առջև, ինչն ընկերությանը կբերի սնանկացման:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, ինչպես նաև ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման արդյունքում կազմված արձանագրությունով տրված հանձնարարականը, նաև այն հանգամանքը, որ ընկերությունը ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ, ընկերությունը խնդրում է 2013 թ-ի ընթացքում իրեն համարել ԱԱՀ վճարող:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Մուլտի Հոմ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից 2013 թ-ին ներկայացվել է հայտարարություն «Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին»: Նշված հայտարարության ներկայացմամբ «Մուլտի Հոմ» ՍՊԸ-ն իրեն համարել է ԱԱՀ վճարող և կատարել է դրանից բխող գործողություններ, ինչը, սակայն, չի ընդունվել

Մաշտոցի ՀՏ կողմից, քանի որ ԱԱՀ վճարող համարվելու համար վերոգրյալ հայտարարության փոխարեն ընկերության կողմից պետք է ներկայացվեր հայտարարություն «ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ»:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովն բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Ելնելով վերոգրյալից, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Հաշվի առնելով, որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմնին հայտնի չեն, հարկային մարմնին ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը, սակայն, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման արդյունքում կազմված թիվ

23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման N 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով տրված հանձնարարականը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ, Հանձնաժողովը գտնում է, որ «Մուլտի Հոմ» ՍՊԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

«Մուլտի Հոմ» ՍՊԸ 27.06.2014 թ-ի և 09.07.2014 թ-ի գրություններով բերված գանգատը 2013 թ-ի ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ